





ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ՄԱՐ ԶԱՐԳԱՄԱՍ Գ

ԿՐԵԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՆԵԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏԴԱՐԱՆ
ՀՈՌՎՄ

1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցանկույի բաժանորդագրինն է մեկ մեծիս անոնց համար որ ի 4. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի զաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտս 4. Պոլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանիք վերջնականապէս պիտի ճշդուին: — Ընկ թիւը՝ մեկ դանտիսն է:

2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաւ օրերը:

3. Խնդագրութիւնս պարստաւորեալ չի անպատճառ կամ նոյնութեանը հրատարակելու իրեն դրկուած ո՛ր է յօդուած:

4. Ասորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը սակայն կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խնդագրութեան:

6. Զեռագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցեանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԲԱԾԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Առաքին Տարի

28 Հոկտեմբեր 1911

Թիւ 19.

ՆՈՐԱՆՏԻՐ ԵՓՈՍԿՈՓՈՍԱՅ ՉԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԼԱՆՏԵՍԸ



Քրիստոս Տէրն մեր, Դոգդոթայի վրայ աստուածային Փրկագործութիւնը կատարելէն, ու երեք օր յետոյ փառօք ի մեռելաց յառնելէն վերջը, ստէպ երեցաւ իւր աշակերտաց՝ զանոնք մխիթարելու, զօրացնելու և կազդուրելու համար: Այս քաղցր այցելութիւններու միոյն մէջ էր (Յովհ. ի.), երբ Կէնարարը իւր չարչարանաց սպիւնները ցոյց տալով, և իւր անխռով խաղաղութեան ողջոյնը աւետելով, յարեց թէ կը զրկէ զիրենք ինչպէս Հայրը զինքը զրկած էր: Ու՞ր. աշակերտելու ամէն հեթանոսները, բովանդակ տիեզերքը. ինչ՞ ընելու. օտրվեցնելու համար անոնց իր վարդապետութիւնները, իր պատուէրները. աշխարհս վեր ի վայր ընելու, մտաց և սրտի կուռքերը տապալելու, նոր ստեղծելու զաշխարհ: Ինչ ահագին գործ էր այն զոր մի քանի ձկնորսներու կը յանձնէր Փրկիչը. անոնք անդադար պիտի քալէին, քարոզէին՝ յաղթելով ամէն դժուարու-

թիւն. քնաւ պիտի չդադրէին խօսելէ, աւելի հնազանդելով Աստուծոյ՝ քան մարդկան, բանտ, հուր, սուր, չարչարանք, մահ, պիտի չկոտորէին զիրենք. զի եթէ իրենց վարդապետը հալածեցին, ապա և հարկ տնհրա-
ծեշտ էր որ զիրենք ալ հալածէին, զի աշակերտը աւելի մեծ չէ քան իւր վարդապետը: Հոգեւորական այս ահեղ պատերազմին համար սակայն հար-
ոյժ մը ունէր Յիսուս, զոր ստէպ խոստացած էր առաքելոց, Մխիթարիչ քաղցր սնունտ տալ. և ահա վերայիշեալ աստուածային այցելութեան ժա-
մանակ, առաքելութեան տուջութիւնը կատարելէն անմիջապէս վերջը,
փչեց անոնց վրայ Բանն Աստուծոյ իւր աստուածային Բերնով, և ըստ.
« Առէք Հոգի սուրբ »: Տուաւ անոնց Ս. Երրորդութեան երրորդ Անձը,
որ լեցուց զանոնք և տաճար յարդարեց իրեն և կազմեց Քրիստոսի Առա-
քեալներ և տեղակալներ... Եպիսկոպոս ըրաւ զանոնք, նուիրապետական
իշխանութեան լրութեամբ հանգչելով անոնց վրայ: « Եդ զձեզ Հոգին
սուրբ տեսուչ » հովուել զժողովուրդ Տեսուն, զոր ապրեցոյց սրբամբ իւ-
րով » (Գործ. Ի. 28.):

Քրիստոսի Փաշանորդին հրամանովը, մեր Սրբազան Կաթողիկոս-Պա-
տրիարքը այս աստուածաւանդ տարտղութիւնը կատարեց ամենայն մեծ-
վայելութեամբ: Յաւիտեան Բազմքին մէջ, Ս. Նիկողայոս Տալինտինեան
Եկեղեցւոյն մէջ: Անպատմելի չարչարանքներէն եկած սրբասէր Հայրապե-
տը, Քրիստոսի յարութեան և աննխազ խոստումներուն զօրութեամբ միշտ
կազդուրուած, և Եպիսկոպոսակից Եղբայրներէն շրջապատուած, կարծես
նորօրինակ առաքելոց խմբակի մը վրայ, զորս կը զրկէր Ս. Աւետարանը
քարոզելու, ամեն փորձութեան և հալածանաց արիարար դիմադրուելու,
և հովուելու « Զժողովուրդ Տեսուն », իբրեւ զՅիսուս Քրիստոս փչեց և ը-
սաւ անոնց. « Առէ՛ք Հոգի՛ Սուրբ »: Անոնք քահանայական անբաւիր կե-
նօք, անստերիւր վարդապետութեամբ և փորձ առաքելութիւններով օժ-
տուած և զարգարուած էին. և բովանդակ եկեղեցին վկայեց բարձրաձայն
թէ « Արժանի են » այս վսեմ կոչման՝ « աստուածային և երկնաւոր ճոր-
հին »: Եւ հանգչեցաւ անոնց վրայ « Հոգի Աստուծոյ, հոգի խոստութեան
և հանճարոյ, հոգի խորհրդոյ և զօրութեան » (Ես. Ժ. 2.). « Սէլն ի Սի-
րոյ զՍէրդ առաքեաց... Գգուես յիւրով աղանակերպ, զմարդիկ ծնանիս
աստուածակերպ... Որ մարգարէս տաս ի հովուաց, և առաքեալս ի ձկնոր-
սաց ». որուն անքննին աղդեցութիւններուն վրայ այնքան չքնաղ բաներ
լայն մեր երանելի Հայրապետն Շնորհալի, հոգեշնորհն Լամբրոնացի և
սերովբէանմանն Նարեկացի: Սիրալի էր այս տեսարանը և սարսուղեցիկ:

Այսքան բազմաթիւ Եպիսկոպոսաց Օծում՝ և այսպիսի շքեղ արարողութեամբ, ցարդ չէր տեսնուած մեր Հասարակութեան մէջ։ Մտնուանդ ի Հոսմ բնաւ չէր տեսնուած հայածէս Եպիսկոպոսական ձեռնադրութիւն մը։ Ահա թէ ինչու, հակառակ աւանդական Հոկտեմբերային զուարճութեանց, Կիրակի օր, յորում կը տօնախմբուէր նաեւ յիշեալ եկեղեցւոյն Օծման Տարեդարձն, 22 Հոկտեմբերի, ընտրեալ բազմութիւն մը լեցուցած էր Հայ Դպրոցին եկեղեցին, աւէն գտաակարգէ, ուր ներկայացուած էին մանաւանդ ամէն եկեղեցական հաստատութիւնք և արեւելածէս եկեղեցիներ իսկ։ Վերնատան առջև, ուր Հոգին Սուրբ իջաւ « յանկարծակի հնչիւնով՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ... Եւ երեւցան նոցա բաժանեալ լիզուք իբրեւ քի հոյ », խռնուած էին « արք երկիւղածք, յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից... եկն միաբան բազմութիւնն և խռնեցաւ » (Գործ. Բ.)։ Շարաթ երեկոյնին հանդիսութեամբ տեղի ունեցած էր նորընտրներուն Կոչումը, ըստ Քահանայապետական ծիսարանի։ Կիրակի առաւօտ ևս առաւել շքեղապէս կատարուեցաւ հանգէսը, որ ժամը 8 ին սկսած, տեւեց զրեթէ մինչև կէսօր։ Արդէն Եպիսկոպոսական ձեռնադրութեան հայկական արարողութիւնը անվիճելի կերպով ամենավսեմն է ամէն ծէսերու ո՛ր և է արարողութիւններուն. այնքան զմայլիչ և փղծկեցուցիչ է՝ որ հայերէն չգիտցող հաւատացեալքն անգամ խորապէս զգածուած կը մնան այս հանգէսին մէջ, մանաւանդ երբ կատարուի պարտուպատշաճ ճշդութեամբ, ինչպէս այս անգամ եղաւ։ Վսեմին և անհասին սարսուռը կարծես կը շրջէր բազմութեան վրայ, երբ յառաջացաւ թափօրը. քաղցր եղանակաւորութեամբ. երբ Հայրապետը բազմելով իր Գահուն վրայ, կ'ընդունէր և կ'օրհնէր եկեղեցական ամէն աստիճանաւորները զատ զատ, ապա և հաւատացեալները՝ այնչէս գտաակարգէ անխտիր. և հրեշտակաձայն մաղթանքներ կը վերառաքուէին իր կենաց երջանկութեան համար, կրկնելով երեքնելով. « Իս րօշա էթի, Տէ'սրօթա »... և երբ եկեղեցւոյ դրան առջև ինն ընտրեալք ի ծունր իջած և գլուխնին գետին խոնարհեցուցած Հայրապետէն կ'աղերսէին. « Հրամայեա՛ Տէ'ր օրհնութեամբ ստեղ »։ Եւ աշխարհիս զժուարութիւններն առակող երեք գետերէն անցնելով, կուգային վերջապէս ամէն մէկը կանգնիլ Հայրապետական Աթոռոյն պատուանդանին վրայ թեւատարած կեցող արծիւին թեւոց վրայ, ճախրաթեւ ի բարձունս սնուանելու խորհրդանիշ այլաբանութեամբ։ Ա՛լ այնուհետեւ Հայրապետին և անոնց մէջ տեղի ունեցող տրամախօսական հարց ու պատասխանն գերա-

զանցապէս յուզիչ է. Սրտաշարժ խոտուածներ՝ մաքրասէր կենցաղավա-
րութեան, հաւատոյ անխախտ հաստատութեան, մտրութեանց ոնպայման
դատապարտութեան, մեծաւորաց հնազանդութեան, հովուութեան սիրա-
լիր պաշտաման վրայ լիութի խոտովանութիւններ և հրահանգներ. զորոնք
լատ արժանւոյն պատկերացնելու համար, հարկ պիտի ըլլար ամբողջովին
թարգմանել: Մի և նոյն հանդիսութիւն արարողութեամբ է որ նուիրապե-
տական երգումն ըրին առ Սրբազան Կ. Պապիւն և առ օրինաւոր
Յաջորդս նորա: Ապա՝ երբ Աւետարանի ընթերցումէն առաջ Ս. Հայրա-
պետը՝ երկու առնթերակաց՝ Արհի. Արքիւարեան և Կիւլեան Ձեռնադրիչ
Եպիսկոպոսակօք Աւագ Սեղանին առջև բազմեցաւ, իւր առջև ի ծունր
իջան ինն ընտրեալները, ժողովրդեան ուշադրութիւնը և ջերմօրոնդն
յուզումը գերատիծան էր: Ձեռնադրութեան սրտաշարժ արարողութիւնը
կատարուեցաւ, երկնաւոր վսեմութիւն մը տրտայայտելով, նոյնպէս հետը-
հետէ կատարուեցան եպիսկոպոսական յատկանիչ զարդուց առջութիւնք:
Սրբազան Հայրապետը իւրաքանչիւր ընտրելոյն կուրծքը պարգտեց գե-
ղեցիկ լանջախաչով զոր՝ ինք շղթայովն հանդերձ կ'ընծայէր ի յիշատակ
անմոռանալի այս հանդէսին. նոյնպէս անոնց մէջ միոյն մասնեմաստն անցուց
իրեն հայրական պարգէն եղող գեղարուեստ մատանի մը: Եւ թափօրիւ
կը բերուէր Ս. Միւռօնը, զոր մեծարեց բազմութիւնն յաղնիկայ. և օ-
ծուեցան՝ ըստ արարողութեան, նորընտիրներուն գագաթն ու ըթմաստը.
և ամէն ինչ լրանալով, կոչմամբ և փչմամբ Հոգւոյն Սրբոյ, կանգնեցան
Օծեալք՝ զարդարուած քահանայապետական զգեստներով, գաւազանաւ
և խոյրով, և խաչ ի ձեռին, և արտասուելից ողջագութեցոյն Ս. Հայրա-
պետին և միւս Եպիսկոպոսաց հետ. և գառնալով առ ժողովուրդն, մե-
ծարուեցան Աջահամբուրիւ ներկայ պաշտօնեաներէն և ժողովրդականներէն,
զորոնք օրհնեցին իրենց հովուական անդրանիկ Օրհնութեամբ: Ապա շա-
րուելով յաջ և յահակ Հայրապետին, Աւագ Սեղանին առջև, միաբան
շարունակեցին Ս. Պատարագը, որոյ աւարտումէն վերջը, հանդիսաւոր
թափօրը վերադարձաւ Մեծ Աւանդատունը:

* *

Ամենապ. Հոգեւոր Տէր նորընտիր Եպիսկոպոսները պատուելու հա-
մար հայրական խնամով պատրաստել տուած էր րամհոջքեղ Նախտնաչ մը
(Rinfresco), շուրջ երկու հարիւր հրաւիրելոյ: Հայ Դպրոցին մեծ սեղա-
նատունը ճաշակաւոր կերպով զարդարուած էր. հրաւիրեալք մեծարուե-
ցան ազնիւ կերպով և շնորհաւորեցին ջերմօրէն նոր Օծեալները և Սրբա-

զան Հայրապետը: Իտալերէն Գեղեցիկ Ուղերձ մը խօսեցաւ Արհի. Օգոստինոս Արք. Սայեղեան, Վիճակաւոր Բերիոյ, յանուն Եպիսկոպոսաց, որով կը շնորհաւորէր Նոր Օծեալները և կը փառաբանէր Սրբազան Քահանայապետը: Քիչ վերջը Թարգմանաբար պիտի գնինք զայն, ինչպէս նաև մի քննի ուրիշ Բաժակաճառերն, որոնք արտաաւանուեցան կէսօրէն վերջը տրուած սեղանին վրայ:

Այսպիսի քաղցր ուրախութեամբ կը կնքուէր յաւերժական յիշատակաց արժանի այս օրը:

* *

Կը փութամք մեր խոնարհ, անկեղծ ու սրտագին բարեմաղթութիւնները մատուցանել Նոր Օծեալ Եպիսկոպոսաց իւրաքանչիւրին, և գոչել « ի յամենայն ամի »: Կը մաղթենք բարօրութիւն, երջանկութիւն և յաջողութիւն յամենայնի, այնպիսի ընտրելոցդ Աստուծոյ, որպիսիներն մեր խեղճ Հասարակութիւնը ցարդ տեսած չէ ի միասին, և որոնք պատիւ պիտի հանդիսանան մեր Նուիրապետութեան: Այն չքնաղ առաքիլութիւններն որոնցմով անտարակուսելի կերպով զարգարուած են իրենք, սիրելի և պաշտելի պիտի ընեն զանոնք անշուշտ իրենց ժողովրդոց, զորս նայնպէս կը շնորհաւորենք այսքան արժանւնտիր Հովիւներու արժանի ըլլալուն համար: Պիտի նկատեն ի նոսա այն երկնաւոր տիպարը զոր Ս. Առաքեալն Պօղոս կը հարէ Եպիսկոպոսի մը անձին համար, գրելով առ Տիտոս և Տիմոթէոս, և Առաքելապետն Ս. Պետրոս՝ իւր Կաթողիկոսաց Ա. Թղթոյն մէջ անձնուրաց, պարտաճանաչ, անբասիր, արդար, հնազանդութեան և խոնարհութեան օրինակ, հայր հեղահամբոյր և գթնառատ. ի վարդապետութեան՝ անդեղեւուն և անսայթաք, իսկ ի ոէր՝ առատ և զեղուն. ոչխարաց վրայ իրենց անձը դնող, և Եկեղեցւոյ իրնւանց հաւիանձախնդիր: Մի՛ Ս. Պետրոսի Աթուոյն հետ, մի՛ Պատրիարքին հետ, մի՛ իրարու հետ, Ս. Նուիրապետութիւնը պիտի կազմին, փրկութեան ստեղծատեղաց գրաւականը: Աներկիւզ և անսասան ի չարեաց և ի հալածանաց. զի այն մեծ պատիւ է: « Աշակերտը՝ ըսաւ Քրիստոս չկրնար աւելի մեծ ըլլալ քան իւր Վարդապետը, եթէ զիս հալածեցին, հետեալ բար գձեզ ալ պիտի հալածեն » հալածուիլը Քրիստոսի անյեղլի խոստումն է, հրաւանն է, Վարձքն է: ... Պիտի կոչեն անոնք ժողովուրդները, պիտի հրահանգեն, պիտի մխիթարեն, պիտի յանդիմանեն, պիտի պատժեն, խրախուսեն, խրատեն, վարձատրեն: Ո՛հ ինչե՛ր խօսեցաւ իրենց որաին Հոգին Աստուծոյ որ իր պատգամները կը զրկէ Եկեղեցեաց Դիտապետներ-

րուն Հրեշտակներուն » . « Որ սենիցի ակամօյն լինելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին սուրբ առ Եկեղեցիս » (Յայտ . Բ . 7) : Իր աստուածային լրութեամբ հանգչեցաւ անոնց հոգւոց մէջ անեղ և անստեղծ Հոգին Սուրբ , « Հոգի իմաստութեան , Հոգի մտաւոր » (Իմ . Է .) որով յղացաւ Կոյնն անարատ զՈրդին Աստուծոյ . որ լցոյց զՔրիստոս ի Յրդանան , զարթոյց զՍիմէոն , որ կը բաժնէ շնորհքները ինչպէս որ կ'ուզէ . որ կը խօսեցնէ Առաքեալները , կը ծնանի Քրիստոնեաները Ս . Աւետանաւ , տաճար մաքրելով իրեն . Հոգի ճշմարտութեան զոր աշխարհս չկրնար ընդունիլ . որ կը խօսի ժողովոց մէջ Հայրապետաց բերնով (Գործ . Ժե .) . որ ի թիկունս կը հասնի մեր տկարութեան , կը բարեխօսէ ի հեծութիւնս անմուռնչս (Հա . Ը . Գ .) . կը մխիթարէ , կը զօրացնէ , երկնաւոր յայտնութիւններ կ'ընծեուէ :

Անտրտում գործէ այս Հոգին նոր Օծելոց մէջ՝ երկայն տարիներ պար . — գեւելով զիրենք իրենց ժողովրդոց , զսրս երջանկացնէ այժմ և յաւէտ , և կարենան պարծել առաջի Բարձրելոյն , գոչելով . « Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ևս ինձ Աստուած » (Ես . Ը . 18 .) :

Նոր Եպիսկոպոսաց Զեռնագրութենէն վերջը՝ Սրբազան Քահանայապետին մեծարանաց հեռագիր մը տրուած ըլլալով , Նորին Սրբութիւնը Կարգ . Մէրի տէլ վալի միջոցով հաճած էր զրկել հետեւեալ Օրհնութեան հեռագիր պատասխանը , որ Սեղանի վրայ հասնելով , կարգացուեցաւ ցնծալից ծափերով և խանդավառ կեցցէներով ողջունուած :

« Սրբազան Հայրը մեծապէս հաճեցաւ նոր օծեալ Եպիսկոպոսաց և « ամբողջ Հայ Նուիրապետութեան որդիական ջերմութեամբ մանարանքէն . « սրտի զեղումով կ'առաքէ նորէն ամենուր իւր Առաքելական Օրհնութիւնը՝ « երկնաւոր ընտրելագոյն շնորհաց գրաւական » :

Կարգ . Մէրի տէլ վալ

Հանգիստութեան առթիւ արտասանուած բաժակաճառերը կը հրատարակենք հոս .

Արհի . Օգոստինոս Արք . Սայեղեան , Վիճակաւորն Բերիոյ , ի կողմանէ Եպիսկոպոսաց դասուն խօսեցաւ իտալերէն լեզուաւ հետեւեալ բաժակաճառը առ Նոր Օծեալս .

« Արհի . Գերապայծառներ և Աստիճանակիցք .

Մեզի համար ցանկալի պարտք մըն է միմեզմայն և ճշմարիտ հաճոյք՝ ձեր եպիսկոպոսական Ձեռնադրութեան այս բարերաստիկ աւուր մէջ համառօտիւ արտայայտել մեր վառ բորբոք ու անկեղծ շնորհաւորութիւնները այս արժանապատուութեան համար որուն սմբարձայք :

Այս հանգիստաւոր ու չքեղ արարողութիւնը որ կատարուեցաւ օծելոց այլքան բազմութեամբ՝ ունենալով բարերաստիկ առհաւատչեայ զհաճութիւն ծայրագոյն Քահանայապետին որ Գլուխ է ընդհանուր Եկեղեցւոյ ու կը տիրէ ի Վաթողիկէ տիեզերս , այս արարողութիւնը՝ կ'ըսեմ , առաջին նախնին է որ կը հանդիպի մեր Հայ Եկեղեցւոյն մէջ : Հետեւաբար ուրախակից ենք ձեզ ու մի և նոյն ժամանակ կը խնդակցինք մենք մեզի հետ՝ սաստիճանակից ունենալով կարի արժանաւոր Եպիսկոպոսներ , վսեմ ուսաքրնութիւններով , անսայթաք վարդապետութեամբ և արծարծուն եռանդով զարդարուած : Յիշաւի այս շնորհ արդիւնք է՝ ո՛չ միայն ձեր արժանեաց ու ձեր ազնիւ բարեմասնութիւններուն , այլ նաեւ Ամենապահապետ Տիրոջ , որ պարագայից ստիպումով հարկադրեցաւ ձեր անուանումը բացառիկ կերպով կատարել : Մենք սրտադին կը կը ծափահարենք այս ընտրութեան , և Ամենապատիւ Կ . Պատրիարքին ալ մեր անկեղծ շնորհակալիքը կը մատուցանենք անոր համար որ մեր Նախնապետութիւնը օժտեց արժանաւոր հովիւներով . և առ Ամենակալն կը բարձրացնենք ձեր արտադին ու խոնարհ պաղատանքները , որ իւր շնորհքով հաճի օգնական ըլլալ ձեզ , որպէս զի կտրող ըլլաք իմաստութեամբ պրածել՝ ձեր հայրակմն խնամոց յանձնուած հօտը . որովհետեւ , ինչպէս որ լաւ գիպէք , Եպիսկոպոսական արժանապատուութիւնը միշտ իբրեւ ծանր բեռ մը նկատեցին տնոնք որ անոր բարձրացուն : Այս պաշտօնը աջօրուան օրո՛չատ աւելի դժուար է , աւելի տաժանելի և պարտասեցաւցիչ , մանաւանդ Հասարակութեան ներկայ հանգամանաց մէջ : Դուք , երբ երջանկաբար դառնաք ձեր թեմերը , հնար է պիտի կրէք պաշտօններ , հալածանք և վիշտ ու նեղութիւն : Մի՛ վհատիք , այլ տպաւինեցէ՛ք յԱստուած , որ զձեզ այս կոչման կանչած ըլլալով , ի հարկէ պիտի տայ ձեզ շնորհք և օգնութիւն , որով կարող ըլլաք պաշտպանել կրօնքի և կաթողիկէ սկզբունքներու դատը . և որպէս զի ձեր պաշտօնը կարեւոր յառաջ բերել փրկութեան առատ պտուղներ , այժմէն իսկ ձեզի առաջնորդ ու կանոն ընտրեցեք ազօթքէ՛ք եղբայրսիրութիւնը հեղուցութիւնն ու համբերութիւնը , այս զէնքերով

Տէրն մեր Յիսուս Քրիստոս յաղթեց զսչխարհ. այս զէնքերով Եկեղեցին յաղթանակեց իր թշնամեաց վրայ, և այս զէնքերով դուք պիտի կարենաք չահիլ ձեր բարի հաւատացելոց համարումն ու սէրը, ինչպէս նաև բերել մոլորեալներն առաքինութեան ճամբան և զգաւորացնել:

Եւ ձեզ ալ, ո՛վ մեծարոյ Գեր. Տեսարք և պատուական Պարօնայք, կը մատուցանենք մեր շնորհակալիքը որ հաճեցաք պատուել զմեզ այս առարողութեան ներկայ գտնուելով:

Բաժակ կ'առաջարկեմ ի բարեկենդանութիւն Սրբազան Քահանայապետին որ լիացուց զմեզ իւր բարերարութիւններով. Կեցցէ՛ Նորին Սրբութիւն Պիոս Ժ: — Կեցցէ՛ Վսեմ. Կարգ. Կօթթի, մեր Պաշտպանը. — Կեցցէ՛ Ամենապ. Գերերջ. Հոգևոր Տէր. — Կեցցէ՛ Նախապետութիւնս: »

Արհի. Գրիգոր Արք. Գովրիկեան Արքահայրն խօսեցաւ հետևեալ բաժակաճառը.

« Գերերջանիկ և Հոգևոր Տէր. — Արհիապատիւ Արքեպիսկոպոսունք և մեծապատիւ Եպիսկոպոսներ:

Թէպէտ Եպիսկոպոսական աստիճանին մէջ՝ ամենէն վերջիններէն մէկն եմ, բայց քահանայական օծութիւնն ընդունելու մէջ ամենէն հինն, և ըստ հետևորդի ամենէն Երիցագոյնն ըլլալով՝ կը խնդրեմ Գերերջ, Տէրութենէդ, որ բարեհաճիք ինծի ներելու որ այսօրուան արտաքոյ կարգի առթիւ, այս տարօրինակ դիպուածին պատճառաւ, մէկ երկու խօսք մը խօսիմ: »

Կարծես թէ Աստուծոյ մէկ մասնաւոր նախախնամութիւնն է, որ Հռովմայ Քահանայապետները, մեր աղգին՝ ամէն ատեն մասնաւոր սէր, յարումն, գթութիւն ու համակրութիւն ցուցուցած են: — Թող տալով հիններն, որոնք այլ և այլ ժամանակ, ամէն միջոց բանեցուցած, ամէն քար շարժած են — և ոչ առանց արգիւնքի — որպէս զի ուղիղ հաւատքը մեր ազգայնոց մէջ հաստատուն պահեն, զարգացնեն ու յառաջացնեն — ու ատենք համակրութիւնը՝ հայ ազգին պատանեկաց սրտին մէջ վառ պահելու ու զիրենք աւելի Աստուծոյ մօտեցնելու համար — օգնական եղած են շատ հեղ՝ ոչ միայն բարոյապէս, այլ և նիւթապէս, հիմնելով և հիմնել տալով այլ և այլ Եպիսկոպոսարաններ, կղերանոցներ, ուսումնարաններ, գիտնական ու բարեպաշտ ընկերութիւններ և այլն: — Յայտնապէս կը

նշմարենք, որ քահանայապետաց մեզի ցուցուցած ամէն գթութիւնն, համակրանքն ու սէրը գերազանցեց հիմակուան Սրբազան Հօր, Պիոսի Ժ.ի գթութիւնը, յարումն ու համակրութիւնը, որ մեր օրերուն ոչ այնչափ հաճոյական յարարերութիւնները ձեռք առնելով և յօգուտ գործածել ուղելով, խնայողութեամբ կարգադրեց այս անգամուան համար, որ այն շատոնց ի վեր պարապութեան մէջ ու որք գտնուած եպիսկոպոսական աթոռներն՝ արժանաւոր հովուապետներ ընդունին:

Դրեթէ չըսուած — կամ թէ ըսենք՝ շատ հազուագիւտ — բան է, որ միեւնոյն միջոցին, մէկ անգամուն, ինը եպիսկոպոս ձեռնադրուի մէկտեղ: Ասիկայ՝ անմոռի արտաքոյ կարգի դէպք մըն է, զոր մեր պատմութեանը մէջ գիւրաւ չենք գտներ: — Այս բանս՝ Ս. Հայրն, անձամբ ըրաւ, կարգադրեց՝ Աստուծմէ իրեն տրուած իշխանութեան զօրութեամբ: — Ինք՝ իր յատուկ ձեռքովը պատուեց նաև ամէն մէկ անուանուած եպիսկոպոսն՝ եպիսկոպոսական խաչով մը:

Եղածին դէմ խորհելու, խօսելու, դժգոհելու իրաւունք չունի — և չի կրնար ունենալ ո՛չ ոք — ո՛չ իշխանութիւն, ո՛չ վաղեմի սովորութիւն, ո՛չ ժողով, ո՛չ արտօնութիւն: — Այս բանս չհասկցողին՝ ամենայն իրաւամբ կրնայ ըսուիլ՝ թէ՛ ո՛վ որ չունի իրեն՝ զեկեղեցին, մայր — չունի նաև, իրեն՝ զԱստուծոյ, հայր:

Ուստի կը պտուղաճի. մանաւանդ թէ պարտքերնիս է, խնդրել Աստուծմէ, որ չնորհէ՝ Պիոս Ժ. Քահանայապետին, մեր սիրելի ու գթած Հօր՝ բովանդակ ուղղափառ եկեղեցւոյն Գլխուն, Ս. Պետրոսի արժանաւոր յաջորդին, երկայն կեանք ու երջանիկ կառավարութիւն: — Կեցցէ՛ Պիոս Ժ. Ս. Քահանայապետը: —

Ջայտ ըրած ատեննիս չենք կրնար ու պէտք չենք տգիտանալ նաև՝ մեր Գերերջանիկ Տիրոջ մեծ արգիւնաւորութիւններն, իր աշխոյժ գործունէութիւնը, իր յաջող ձեռնարկութեան ոգին զոր գործադրեց նաև որք մնացած թմրութեան արժանաւոր հովուապետներ հոգալու մէջ: Ուստի կը խնդրենք Աստուծմէ իրեն համար զօրութիւն, յարատեւութիւն, սրտի մխիթարութիւն և ուրախութիւն, ու կը բարեմաղթենք իրեն երկայն ու երջանիկ օրեր, ի խաղաղ կառավարութիւն ու յաջող վարչութիւն. Կեցցէ՛: —

Կեցցի՛ն նոյնպէս ամէն նորընտիր և օծութեան սուրբ իւզովը դրոշմուած եպիսկոպոսներն — Կեցցե՛ն: —

Արհիպատիւ Յովնէփ Արքեպիսկոպոս Ռօքոսեան ի դիմաց իւր աստիճանակից Նոր օծեալ Արհի. Եպիսկոպոսոց հետագայ բանախօսութիւնն ըրաւ .

Ամենապատիւ Գերարջանիկ Հոգեւոր Տէր .

Առթիւ այն Աստուածային փառանդ Սուրբ պաշտամունքին որ այս առաւօտ չքեղապէս կատարուեցաւ, համարձակութիւնը կ'առնում յանուն հոս Զեր շուրջը համախմբուած նորընտիր Արհի. Արքեպիսկոպոսոց և Եպիսկոպոսաց, իւրաքանչիւրին իր սրտին մէջ զգացածները կարճառօտ արտայայտելու թէև ըստ արժանւոյն չկարենամ համապատասխանել իրենց զգացմանց թարգմանը ըլլալու պաշտօնին :

Ամենապատիւ Գերերջանիկ Հոգեւոր Տէր, կաթողիկէութեան կենդրոնը եղող այս Մայրաքաղաքը Սուրբ Նիկողայոսի Տալինտինայ պատուոյն նուիրեալ այս տաճարիս մէջ՝ ընդ բարձր հովանաւորութեամբ և հայրական օրհնութեամբ Սրբ. Քահանայապետի Պիոսի Ժ. Ի. Դուք, Հոգեւոր Տէր, երբ այս Եկեղեցւոյս Աւագ բեմին վրայ կանգնած, Զեր Սուրբ Աջը մեր գլուխներուն վրայ տարածելով մեզի Սուրբ Հոգին պարգեւեցիք ի կարգ Եպիսկոպոսութեան, Քրիստոսի Մեծ Հովուապետի փոխանորդած դերը կատարելով, յիշեցինք ամէնքս ալ, վստահ եղէք, Փրկչին մեր քովը անցուցած այն վսեմ վայրկեանը, յորում Նա Համբարձմանէն մի քանի վայրկեան յառաջ Զիթնիկաց լեռը, հոծ բազմութեան մը հետ իր շուրջը բոլորուած Առաքեալներուն վրայ իւր աստուածային բազուկները կարկառելով չՀոգին Սուրբ կը խոստանայ, շնորհելով միանգամայն անանց ամէն իշխանութիւն և հրամայելով որ երթան իւր ասուրբ Աւետարանը քորողեն յամենայն աշխարհ :

Առաքեալք, այդ ապիկար մարդիկ, Քրիստոսի դպրոցին մէջ նախապէս կրթուած ըլլալով, Աստուածային Սուրբ Հոգին ընդունելէ յետոյ երկրիս երեսը կերպարանափոխ ընելու այդ դժուարին գործն գլուխ հանեցին յաշնոթութեամբ :

Ամենապատիւ Գերերջանիկ Հոգեւոր Տէր, Դուք այսօր անմահ յիշատակաց արժանի գործ մը կատարեցիք, Դուք այսօր ճշմարիտ Հովիւ հանդիսացաք, Հայ Նուիրապետութեան ճակտին վրայ նոր պսակ մը դնե-

լով, Հայ եկեղեցական հիմնական բարեկարգութեան վարկ մը զարկ մը տալով համագումար Սիւնհոգոսով մը: Կեց՛ջի՛ք:

Ամենապատիւ Գերերջանիկ Հոգեւոր Տէր, մեզմէ իւրաքանչիւրն քիչ ժամանակ յետոյ պիտի մեկնի Ձեր հայրական գրկէն՝ երթալու համար իրեն վիճակուած թեմին մէջ, բայց պիտի մեկնինք Ձեր դպրոցին մէջ լուս դաստիարակուած և պոտերուն խորը գրոշմուած ուղղափառ հաւատով Կանայւայլելի սկզբանց անճրակտելի կնիքով օժտուած, այն սկզբունքներուն զորս գիշեր ցորեկ հանապազ մեր ակամջներուն յեղյիղել չթերացաք. հովիւ քաջին վրայ պատկերացած համայն առաքելական առաքինութիւններուն, յատկապէս անձնութեան, խոնարհութեան, հեզութեան, զոհողութեան, ընկերսիրութեան, և մանաւանդ հլու հպատակութեան և խանդակաթ սիրոյ առ սուրբ Գահն. այո՛, այս առաքինութեանց օրինակներով առլցեալ՝ պիտի տանինք մեզի հետ նոյները տարածելու արծարծելու իւրաքանչիւրն իրեն յանձնուած հօտին տմէն խաւերուն մէջ. պիտի լսէք քիչ ժամանակ վերջ իւրաքանչիւր թեմի մէջ կատարուած բարենորոգմանց, ընդհանուր կերպարանափոխութեան մը բերկրաւէտ լուրերն: Եւ եթէ՝ Հոգեւոր Տէր, Ձեր կատարած ընդհանուր Հովուապետութեան դժուարին գործին մէջ, եթէ կըսեմ՝ ունենաք, զոր Աստուած մի՛ արասցէ, աղետալի ժամեր, ցաւոց վայրկեաններ, դուք վատահեղէք՝ պիտի մխիթարուիք և պիտի սրբէք Ձեր արցունքները տեսնելով այն բաղձալի միութիւնը հովուաց լար հովուապետին, որ Եկեղեցւոյն մեծ փառքերէն մին կազմած է միշտ:

Յուսալից ենք Հոգեւոր Տէր, որ եթէ մեր Հառարակութեան մէջ գտնուեցան և կամ ցարդ կը գտնուին այնպիսիներ, որոնք Ձեր բարձր հանձարին յղացած փրկաւէտ գաղափարներուն և Ձեր ճշմարիտ ազգասիրական որտին աղնիւ զգացումներուն խորը լիապէս թափանցած չեն ցարդ, անոնք ալ, այո՛, անոնք ալ մեր առ Հոգեւոր Տէրն ցոյց տուած անանջատ միութիւնը տեսնելով կանուխ կամ անագան պիտի վութան Ձեր շուրջը համախռնուիլ, որով պիտի կարենաք մխիթարական խօսքերը լսել. « Եղիցի մի հօս եւ մի հովիւ »: Ահաւասիկ ասոնք են մեր երախտագէտ և որդիական զբաղմանց գոյզն արտայայտութիւնքն:

* *

Գերյ. Հ. Գրիգորիս Մ. Վ. Գալէմբեարեան խօսեցաւ հետեւեալ Բա-
ժակաճառը, ուղղեալ առ նոր օծեալ Արհի. Եպիսկոպոսունս .

« Այսօր ե զոր արար Տէր, եկայք ցնծացուք » պիտի ըսէինք անշուշտ՝
եթէ այսօրուան ցնծալից հանդիսութիւններն ուրիշ բարեմոյն պարագա-
ներու մէջ կատարուէին. այն ատեն ձեր թեմերու քահանաները, ձեր հօտն
համօրէն պիտի շրջապատէին զձեզ ուրախ և գոհունակ սրտիւ, պիտի
զմայլէին ի տես իրենց հովուին, մաղթանքներ պիտի զեղուին ձեր վրայ:
Բայց իրերն այսօր այլազգ հանգամանք ունին: Մինչդեռ Ս. Եկեղեցին իր
օրինաւոր Հովուապետին ձեռօք այսօր զձեզ ձեռնադրեց և օծեց մի մի
Քահանայապետներ, ի ներքուստ և յարտաքուստ զարգարեց զձեզ ոսկե-
հուռն զարդու, ձեր սրտերուն ուրախական զգացումներուն եկան խառ-
նուեցան տխուր ներազգումներ, և ձեր ի Հոգւոյն Սրբոյ զուարթացեալ
կերպարանքին վրայ թախիժ մ'եկաւ գծուեցաւ: Եւ իրաւունք ունիք: Հե-
ռու, հեռուէն սեւամած թլփայորդ ամպեր երևցան, փայլակներ տեսան
ձեր աչքերն, որոտումներ լսեցին ձեր ականջները, և սարսեցաք: Ըսին
ձեզի, թէ Ս. Եկեղեցիէն ձեզի յանձնուած, մեր Հայ կաթողիկէ ժողովուր-
դը՝ որ դարերէ ի վեր իր սուրբ հաւատքին վրայ իւր անձը դրած է,
հլու հպատակ իր հոգեւոր առաջնորդներուն, ոչ միայն ի հոգեւորս այլ և
ի կրթականս և ի տնտեսականս, պիտի չուզէ զձեզ իբրեւ իրենց սեպհա-
կան հայրն ու հովիւն ողջունել, շրջապատել, գուրգուրալ, անսալ, հետե-
լի, հպատակիլ, այնպիսի հովիւներու, զորս ոչ Պօղոս և ոչ Ապօղոս ըն-
տրեց և կարգեց, այլ Քրիստոս, ի ձեռն իւր օրինաւոր Փոխանորդին
յերկրի, ի ձեռն Քահանայապետին Հռովմայ, լսկ և մի միայն կաթողիկէ
Հայ հաւատացելոց հոգեւոր և ազգային շահերուն, « իր օրհնած հայ ժողովրդ-
րեան » համար, ինչպէս կ'ըսէր ինքն և մենք ամէնքս անձամբ լսեցինք Ուն-
կընդրութեան օրն: Բայց քաջաբերուեցէք. թող պարզին ձեր օծեալ ճա-
կատէն այդ հեռաւոր ստապատկերներ. ամէն փայլակ շանթ չունի, սեւա-
թոյր ամպեր անվրէպ հեղեղ չունին: Դուք, թերեւ անարգ համարուած
էիք ի մարդկանէ, միշտ լաւագոյնն ընտրել ուզող և յաճախ վրիպող ժո-
ղովրդեան կարճատես աչքերէն հեռու էիք մնացած, թեմերու՝ մէյ մէկ
անկիւնները սքողուած: Բայց « իր օրհնած հայ ժողովրդեան » Ծայրագոյն
Հովիւը, Հռովմայ Սրբազան Քահանայապետին հայրազորով աչքերը տե-
սած էր անշուշտ զձեզ ի վաղուց, և գիտէր որ դուք պիտի կարենաք

« իր օրհնած հայ ժողովրդեան » իրեն նման հայրութիւն ընել, իր աստուածագլոց որդեգորով սիրտը խնամով հանեց փոքրիկ մասեր յաստուածուատ իրեն յանձնուած Հայ կաթողիկէ ժողովրդենէն, կաթողիկէ Արևելքի սոյն անդամանդեայ գրուագէն, և յանձնեց ձեզի որ արածէք, հովուէք զանոնք: Քրիստոս իւր Առաքեալները քաղեց Պաղեստինոյ քաղաքներու մէջ ծածկուած ոչնչութիւններէն. մաքսաւորներ, ձկնորսներ և հալածիչներ առաւ իրեն, և զրկեց զանոնք ոչ թէ քրիստոնէից մէջ, այլ հեթանոսներու և քրիստոնէութեան թշնամիներու մէջ « որպէս զի զէսն իմն խափանեաց »: Եւ ինչեւ չըրին ալդ տկար, անզօր, արհամարհ, անընդունելի նկատուած խեղճուկները. իրենց ազնուութեամբը աստուածային Բանին քարոզութեամբը, հիւանդներու և աղքատներու վրայ գուրգուրալով, իրենց անարատ և սրբակեաց վարութեամբ, որոնցմէ անբաժան է Աստուծոյ հզօր օգնականութիւնը և առընթերակայութիւնը, թշնամիներէն, արիւնարբունէրէն, մեղաւորներէն, սուրբեր և սրբուհիներ յառաջ բերին, քիչ ժամանակի մէջ կանգնեցին այնպիսի Եկեղեցի մը, խումբ մը մարդիկներու, իրենց օրինաւոր Հովիւներու և Առաջնորդներու միշտ հպատակութեան տակ, որ պայծառացաւ, զարգացաւ և այսօրուան ընդարձակութիւնն առաւ, յեցեալ հաւատոյ և բարոյից աստուածային Վիմին վրայ: Ապա օ՛ն, արիւնք մերժեցէք ձեր մտքէն տմէն կասկած ձեզի յանձնուած հօտին հանդէպ, եթէ երբեք ունեցած էք: Հայ կաթողիկէ Հասարակութիւնն իր հնաւանդ կրօնասիրութեամբը պիտի ընդունի զձեզ իբրեւ իրենց ընտրեալ ազնիւ, արդարակրօն Հայրերն ու Հովիւները. բովանդակ եկեղեցական խումբը, աշխարհիկ և վանական քահանաներ իրենց սիրելի հոգեզաւակներուն գլուխն անցած պիտի շրջապեան զձեզ, իրենց մաղթանքները պիտի մատուցանեն ձեզի. իրենց ցաւերն ու բաղձանքները պիտի ներկայացընեն ձեզի. և դուք անտարակոյս Քրիստոսի Առաքեալներուն նման ձեր անձը անոնց վրայ, պիտի դնէք, այսինքն անոնց հոգին սրբելու ի մեղաց, ի մոլութեանց, ի թերակատարութեանց և անոնցմէ մէյմէկ սուրբեր և սրբուհիներ կազմելու, անոնց միտքն ու կենցաղը պիտի կատարեւազործէք ուսումնարաններով և բարեկրթութեամբ, և իրենց նիւթական բարօրութեան պիտի աշխատիք անշահասէր ոգւով և ճշդութեամբ՝ հիւանդանոցներով, աղքատանոցներով և այլ միջոցներով: Ահա Լեւոնեան Հայ վարժարանիս այս սանուկքն, որ ձեր հագւով և գիտութեամբ կը անանին և կը պատրաստուին ձեզի աջակից ըլլալու. աջակից է ձեզի բովանդակ աշխարհիկ և վանական կղերը, աջակից է ձեզի բովանդակ ձեր հօտը, և ուր որ կաթողիկէ հաւատացեալք

իրենց Եպիսկոպոսին հետ հաւատով և հպատակութեամբ մի են, և եպիսկոպոսը նոյնպէս հաւատով և հպատակութեամբ միացեալ է Սրբազան Քահանայնայեանին Հռոմայ, միացեալ է ընդ Քրիստոսի, միացեալ է ընդ Աստուծոյ. և չկայ գօթնաթիւն մը յերկինս և յերկրի, որ այսպիսի միութեան մը յանդիմանարէ՞նք Մենք ամէնքս յայժմ Զեզի այս աստուածեղէն և փրկարար ապագայն կը մտղթենք. կը ինքրենք լաօրեմնամ Աստուծմէ, որ ձեր ապագայ գործունէութեան ճամբու վրայէն բառնայ փշերն ու քարակոյտերը, եւ կամ Զեզի շներէ պողպատեայ փոքեր, որ առաթուը կոխէր տնցնիք ամէն դժուարութեանց վրայէն. կեցցէ՛ք ուրեմն ընդ երկար, սիրեցէ՛ք Զեզ յինձնուած հօտը, սիրուեցէ՛ք ձեր հօտէն. և շատ հեռու չեն այն օրերն, երբ ամէնքս պիտի կարենանք ցնծալից դստի. ահա « Հարք որդեովք բերկրեալք » :

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Ս. ԱՌՈՒՐ ԵՒ ԷՏԱԼ-ԵՒ ԹՈՒՐԲ ՊԱՏԵՐԱԶՄ

Osservatore Romano թերթին մէջ հրատարակուած է հետեւեալ պաշտօնական զեկոյցը .

« Կաթողիկէ թերթերու մօտնք և քաղմաթիւ եկեղեցական ու աշխարհական ճառախօսներ, իտալ-և-թուրք պատերազմին վրայ խօսելով, այնպէս մը ցոյց տալ կ'ուզեն՝ իբրեւ թէ սրբազան պատերազմ մը մղուելու վրայ ըլլայ, յանուն և օգնութեամբ կրօնքի ու եկեղեցւոյ : Պաշտօն ունինք յայտարարելու զի Ս. Աթոռը ո՛չ միայն պատասխանատուութիւնը չատանձնելու այսպիսի մեղեմութեանց, այլ նաեւ՝ պարտք ունենալով ներկայ պատերազմէն անմասն մնալու, չկրնար հաւանութիւն տալ անոնց և անոնց համար պաւ կը յայտնէ » :

* *

Այսօր հասան ի Հռոմ Սիւնհագոսական Հայրերէն Արհի. Լեւոն Արքեպ. Քէչէճեան, Վիճակաւոր Սերապետիոյ — Եւդոկիոյ, և Արհի. Ստեփան Եպ. Իորայէրեան Վիճակաւոր Խորրհրդի :

Փ. Պիակի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նորնիտ եպիսկոպոսաց Զեռնադրութեան - Հանդիսը էջ 227
Տեղեկագրական - Ս. Արքոռք եւ Իսալ-և-Թուրք Պատերազմը 240

